ղումն է լսել, այլ ընդհանուր անուամբ ամբողջ գաւառին են վերաբերում։

Պ. Լալայեան փոխանակ նախկին սխալն ընդունելու, այժըմ մի նոր սխալ է անում, ասելով որ «Թոնրի պսակն աւելի նախնական» է, «իսկ գեհնի պետի օջաղի վրայ կատարուող պսակն աւելի ուշ»։ Մարդաբանութեան այդ մասնագէտը պիտի գիտենար նախ, որ օջաղը ժամանակով առաջ է, իսկ թոնիրը ուշ. օջաղ ունին բոլոր ազգերն անխտիր, իսկ թոնիրը բազմաթիւ ազգերին անծանօթ է եղել և է։ Ցոյներն ու հռովմայեցիք թոնիր չեն ունեցել, ինչպէս ռուսները ու այլ շատ ազգեր։ Բացի դրանից մասնագէտ պ. Լալայեանը թող գիտենայ, որ հռոմէական ժողովուրդը նախքան թէ գենս և նրա պետն իբր հիմնարկութիւն կ'ունենար, նա ունէր օջաղի պսակը, այսինքն օջաղը կար այն ժամանակ, երբ գենսը գոյութիւն չունէր, ինչպէս և օջաղի պսակը։ Այդ պարոնը նոյնիսկ իր ուսումնասիրած գաւառներում կարող էր տեսնել, որ տեղ-տեղ թոնիրն ամենևին գոյութիւն չի ունեցել և չունի։

Մի քանի այլ կէտերի մասին ասելիք ունէինք, սակայն առանց այն էլ երկարացաւ մեր պատասխանը. ասածներիցս կարծում եմ պարզ է որ բարեխղճութիւն չէ մեզ մեղադրել խեղաթիւրումների մէջ։

Ա. վ. ՂԼՇՏՃԵԱՆ

---

## ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

1) Գ. Մեծատուրեան՝ «Ընկերութիւն կաթնատուների», Ս.-Պետերբուրգ, 1904, գ, 15 կ.։
2) Բժ. Ա. Բուդուղեան՝ «Անտիապաշտութիւն և կախարդութիւն», Ս.-Պետերբուրգ, 1904, գ. 20 կ.։
3) Թ. Խուսկիվաձէ՝ «Փերեզմանատանը», Թարգմ. Ղ. Կ., Թիֆլիս, 1904, գ. 3 կ.։
4) Խ. Շահմազեան՝ «Վարդուհի», Թիֆլիս, 1904, գ. 3 կ.։
5) Հ. Համբարձումեան՝ «Անհունի էջերում», Ս.-Պետերբուրգ, 1904, գ. 60 կ.։
6) Վ. Փափազեան՝ «Աբաղայի դաշտում», Բագու, 1904, գ. 4 կ.։
7) Աւ. Ահարոնեան՝ «Երեխաները», Բագու, 1904, գ. 2. կ.։
8) Գ. Բօյաջեան՝ «Հայ ժողովրդական երգեր»—1. Ջան գիւլում, 2. Մըր խօր պապկէ գերեզման, 3. Հարբըան, 4. Ճախարակ, 5. Գացէք, տեսէք, 6. Բերդիցը դուրս ելայ, 7. Գնաց աշուն, էկաւ գարուն, 8. Բոյդ բարձր, 9. Անի քաղաք, 10. Մշու ողբը.—Պարիզ, 1904, գինն է 2 ր. 25

կ. ճանապարհածախսով. վաճառւում է Սուզանաճեանի երաժշտական խանութում։

9) Ա. Տ.-Պ.՝ «Ակնարկ հին հայ բանաստեղծութեան վրայ», Պետերբուրգ, 1904, գ. 10 կ.։

10) Սալտիք՝ «Սիւնեցու քնարը», Թիֆլիս, 1904, գ. 10 կ.։

11) Մ. Աւետիսեան՝ «Կոյր Բաբին», Բագու, 1904, գ. 10 կ.։

12) Մաքս Նորդաու՝ «Հայրենասէր Իտալացին», Թարգ. Լ. Բաբայեան, Թէհրան, 1904, գ. 10 շահի։

13) «Լուսաբեր» գրական հաւաքածոյ ի յիշատակ Ս. Էջմիածնի հայարվեցհարիւրամեակին, պրակ ա., Նիկոսիա, 1903, գ. 6 բէնի 65 սանթիմ։

14) Pierre Aubry: «Le rythme tonique dans la Poésie Liturgique et dans le Chant des églises chrétiennes au moyen age», Paris, *1903*.

15) Georges Ducrocq: «Pauvre et douce Corée», Paris, *1904*.

16) D-r. Mkrtitsch Ghazarian: «Armenien unter der arabischen Herrschaft bis zur Entstehung des Bagratidenreiches», Marburg, *1903*.

17) В. Тотоміанцъ: «Задачи городского самоуправленія», Петербургъ, 1904, ц. 20 к.

18) «Ազգագրական Հանդէս», XI գիրք, խմբ. Ե. Լալայեանի, Թիֆլիզ, 1904, գ. 2 ր.։

19) «Հանդէս հայագիտութեան», խմբ. Յակոբ Մանանդեանի, Մարբուրգ, 1904։

20) Բժ. Ա. Բուղուղեան՝ «Մտերմական խորհուրդներ պատանիներին», Պետերբուրգ, 1904, գ. 20 կ.։

21) Օր. Շ. Տ.-Ն՝. «Փիղ», Թիֆլիզ, 1904, գ. 8 կ.։

22) Յ. Մանանդեան և Հ. Աճառեան՝ «Հայոց նոր վկաները», Վաղարշապատ, 1903, գ. 3 ր.։

23) ?՝ «Ճշմարիտ մեծութիւնը», Պետերբուրգ, 1904, գ. 7 կ.։

24) Վ. Փափազեան՝ «Մեծ փականք» և «Առիւծի մահը», Թիֆլիս, 1904, գ. 3 կ.։

25) Ե. Տ.-Աբրիստակէսեան՝ «Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը», Մոսկուա, 1904, գ. 20 կ.։

26) Յ. Կարապետեան՝ «Քրիստափոր Կարա-Մուրզա», Թիֆլիս, 1904, գ. 60 կ.։

27) Ռուալլէս՝ «Երեք մոգեր», փոխ. Յ. Կարապետեան, Թիֆլիս, 1904, գ. 10 կ.։